

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

«ԼՐԱԳԻՐ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ 4ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԴՈԿՏ. ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆԻ ՀԵՏ

Կարելուք Այն է, Որ Առաջընթացը Զգալի է

ԼՐԱԳԻՐ.- Ռուբինա Փիրումեան. Կալիֆոռնիայի համալսարանի գիտաշխատող, ցեղասպանագետ. Հայաստանի կրթական 4րդ խորհրդաժողովին մասնակցում է որպէս Արեւմտեան Ամերիկայի ազգային դպրոցների խնամակալ մամուլի ներկայացուցիչ:

ՄԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Տիկին Փիրումեան, դուք մշակել էք «Հայոց Յեղասպանութեան դասաւանդումը Հայկական վարժարաններում» ծրագիրը, ո՞րն է նպատակը եւ ի՞նչ էք կարծում, արդեօ՞ք առանձին առարկայ պէտք է յատկացնել Հայոց Յեղասպանութեան դասաւանդմանը ԱՄՆի Հայկական կրթօջախներում:

ԴՈԿՏ. ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Ծրագիրը, որ այստեղ խորհրդաժողովին ներկայացրի, Հաւաքական աշխատանքի արդիւնք է, որին մասնակցել են Կալիֆոռնիայի մի շարք մասնագէտներ: 2000 թուականին, երբ ես նախագահում էի Ռնամակալ մամուլին, ուսումնասիրություններ կատարեցինք, արդիւնքում եկանք այն եզրակացութեան, որ Հայոց Յեղասպանութեան մասին երկխոսութեան շատ քիչ բան գիտեն: Ամէն տարի՝ Ապրիլի 24ին, եկեղեցում արարձրություն է կատարում, գնում ենք ցեղասպանութեան զոհերի յուշարձանի մօտ, բայց արդեօ՞ք երեխաները գիտեն ինչի համար են գնում: Ուսումնասիրությունն արդիւնքում պարզեցինք, որ շատ անգամ ուսուցիչներին, ծնողներին մեծ մասը, որպէսզի երեխայի հոգեկան ծանր ազդեցություն չթողնեն, ոչինչ չեն պատմում ցեղասպանություն մասին, իսկ մի մասն էլ այնպիսի բաներ են պատմում, որ իսկապէս շատ ծանր ազդեցություն է ունենում երեխաների հոգեկան աշխարհի վրայ ու երբեմն նոյնիսկ, որպէս հոգեբանական ինքնապաշտպանություն, նրանց անտարբերութեան է մղում: Որպէսզի այս երկու ծայրայեղ մօտեցումներն էլ տեղի չունենան եւ մէկ Հաւասարակշռուած դասաւանդման կամ նիւթի փոխանցման ձև լինի, մտածեցինք, որ պէտք է ուղեցոյց կազմենք. դրա համար:

Մեզ օգտակար եղաւ հրէաների օրինակը, որտեղ ղեռ փոքրուց հրէայ երեխաներին սովորեցնում են Ողջակիզման մասին, նրանց դաստիարակում են ոչ թէ որպէս զոհ, այլ պահանջատէր ամբողջ աշխարհից՝ իմանալու, երբեք չմոռանալու հրէաների ցեղասպանությունը: Ըստ մեր պատրաստած ծրագրի՝ ուսուցումը սկսում է նախակրթական տարիքից: Ծրագիրը որպէս առարկայ չի նախատեսուած, այլ առաջարկուած են թեմաներ եւ իւրաքանչիւր թեմային վերաբերող եւ աշակերտի տարիքին համապատասխան նիւթ եւ այն դասաւանդելու դասաձրագիր եւ միջոցներ: Տարուայ ընթացքում ուսուցիչը այլ դասերին զուգընթաց անցնում է այդ թեմաները, որոնք աշակերտին պատրաստում են Ապրիլ ամսին եղեռնի թեման ընկալելու համար: Այդ թեմաները, որոնք պէտք է օգնեն հասկանալու համար ցեղասպանությունը: Օրինակ՝ ներառում են համագործակցություն, ազնուություն, բարեկամություն, փոխադարձ յարգանք, երկրորդ խմբի մէջ ազատություն, քաջություն, արդարություն, կորուստ, ինքնապաշտպանություն, վերապրում եւ այլն: Մեր

նպատակը բնաւ այն չէ, որ երեխաների մէջ զոհի հոգեբանություն կամ թուրք ժողովրդի ղեմ ատելություն ներարկենք, փոքր եւ տկար ազգ ինչու ստորագասութեան բարոյցի առաջացնենք եւ կամ նրանց հետ լացենք ու սգանք: Մեր ժողովրդի ղեմ անարդարություն է կատարուել, եւ այդ անարդարությունը պէտք է վերացուի: Մենք պահանջատէր ենք: Այս ծրագրով աշակերտը բարձր դասարանում արդէն կը սովորի, թէ ինչու է կատարուել Հայոց Յեղասպանությունը, ինչպէ՞ս կատարուել, ի՞նչ է արդիւնքը, ինչու է ուրանում թուրքը, եւ ինչ է մեր հեռանկարը իրրեւ ազգ: Մեծ յոյս ունեմ, որ այ ծրագիրը մեծ հետաքրքրություն առաջացրեց խորհրդաժողովի մասնակիցների մօտ, տարածում կը գտնի եւ կը կիսատուի թէ՛ Հայաստանի, թէ՛ Միխուրի կրթօջախներում:

ՄԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Երկրորդ խմբի մէջ «ազատություն» բառը նշեցիք, մենք էլ կարծես 20 տարի է ազատություն եւ անկախություն ենք ձեռք բերել: Սակայն խօսքի ազատութեան, մարդու իրաւունքների պաշտպանություն հարցում ղեռնա խոցելի ենք:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Ի հարկէ, խօսքի ազատութեան, մարդու իրաւունքների ոտնահարման հարցում խնդիրներ շատ կան, բայց յոյս ունեմ, որ ղեպի ժողովրդավարություն քայլերը գնում են առաջ: Իհարկէ այստեղ մենք դեռ չենք հասել ժողովրդավարութեան: Հիմա չգիտեմ՝ դա կը լինի դրսի՞ ճնշումներով, թէ ինչպէս, բայց ես տեսնում եմ, որ վերջապէս ներսում դաստիարակում է երիտասարդություն, որ համացանցի միջոցով կապ ունի դրսի աշխարհի հետ, գլոբալիզացիայի արդիւնքում աշխարհն այնքա՞ն է փոքրացել, որ դու պարզապէս չես կարող սահմանափակել երիտասարդի մտապատկերը: Այդ երիտասարդությունը ժողովրդավարութեան է ձգտում:

ՄԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Իսկ ի՞նչ է, ըստ Ձեզ, ժողովրդավարությունը:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Ժողովրդավարությունը իւրաքանչիւր քաղաքացու իրաւունքն է տէրը լինելու իր քուէի. այդ քուէների հիման վրայ է ընտրում երկրի ղեկավարությունը, եւ համակարգը ժողովրդին տալիս է միջոց իր իրաւունքը պարտադրելու, եթէ չեղում կայ ժողովրդավարությունից: Այսպէս, պաշտպանուած են մարդու իրաւունքներն ու ազատությունները: Եւ եթէ քաղաքացին զգայ, թէ իրաւունքները ոտնահարուած են, կարողանայ զիմել եւ պաշտպանել իր իրաւունքները:

ՄԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Այստեղ պաշտպանուելու տեղեր կարելի է ասել չկան, դրա համար դիմում են դրսի, Եւրախորհրդի օգնութեանը: **ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.-** Դժբախտաբար, այստեղի դատական համակարգը ղեռնա ժողովրդավարութեան հիմքի վրայ չէ կառուցուած, չի գործում, հիմա չգիտեմ Որոհորային Միություն կամ օլիգարխիային մտածելակերպն է պատճառը, ո՞վ գիտի՝ ինչ ճնշումներ են, ժողովրդին թալանելու, կորզելու. թէ՛ հիմնուած են Հին մտածելակերպի կամ վերելից պատուէրի վրայ: Դատական համակարգը չի գոհացնում, դրա համար

պարզ քաղաքացին դիմում է Եւրազատարան: Չգիտեմ՝ որքանո՞վ է ճիշդ անում, որովհետեւ Եւրազատարան դիմել եւ դրական արդիւնք ստանալ, բնաւ չի նշանակում, որ իր դատը դրանից յետոյ կը լուծուի 100 տոկոսով, որովհետեւ մեր դատարանը կարող է մի ուրիշ բան էլ առաջ քաշել: Բայց, այնուամենայնիւ, ժողովրդավարութեան ձգտում կայ այստեղ եւ փոփոխությունները զգալի են:

ՄԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Վերջին տարիներին մեզ մօտ տեղի ունեցած ղեպերն ու քաղաքացիական շարժումները, երիտասարդների ակտիւությունն է նման յոյսեր տուել: 20 տարուայ ընթացքում ի՞նչ ունենք այդ առումով, 10ից աւելի քաղաքացիական ժողովրդավարութեան ղեկիցիտ (պակաս-ՊՄՔ):

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Այո՛, ինձ այսպէս մտածելու առիթ են տուել վերջին տարիների իրադարձությունները: Իսկ ժողովրդավարութեան ղեկիցիտը սկսուեց անկախությունից յետոյ, երբ օրինակ՝ Գաշնակցություն կուսակցութեան հետ այդ տեսակ հաշուեյարդար տեսան, բանտարկեցին, եւ սխալն արդէն գնաց, թէ եւ դրանից առաջ էլ Տէր-Պետրոսեանը սխալ էր իր քաղաքականութեան մէջ, բայց այդ կէտից՝ զնացին ամենակոպիտ սխալները: Միակ տարբերությունն այն է, որ այսօր երիտասարդությունն աւելի բացայայտ է խօսում, աւելի լուսաւորուած եւ տեղեկացուած է, հիմա աւելի բաց է ամէն բան, իշխանությունները պարտաւոր են հաշիւ տալու, իսկ սկզբում դա էլ չկար: Եւ հէնց դա է, որ ինձ յոյս է տալիս, փոփոխութեան մեծ յոյս:

ՄԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Նշեցիք, որ ամէն տարի Ապրիլի 24ին գնում էք, յարգանքի տուրք էք մատուցում ցեղասպանութեան զոհերին, իսկ Մարտի մէկին արդեօ՞ք գնում էք:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Իհարկէ դրանք անհամեմատելի եւ տարբեր բաներ են, բայց ես հաւատում եմ, որ չպէտք է քաղաքնաւարկել լինեն, չպէտք է նրանց հետ այսպիսի վարուցողություն լինի, Մարտի մէկին թէ՛ ընդդիմությունը, թէ՛ պետությունը շատ սխալ քայլերի գնացին: 10 զոհի համար շատ եմ ափսոսում, չի կարելի չզգալ կատարուած սխալը: Կատարուածի համար մեղաւոր են բոլորը:

ՄԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Քանի որ դուք ցեղասպանագէտ էք, վերջին երկու տարուայ ընթացքում կարծես անընդհատ ցեղասպանութեան հարցը կասկածի տակ դրուել, հետեւում էիք, եւ արդեօ՞ք իշխանութեան վարած դիւանագիտությունը

ձեզ բաւարարում էր: **ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.-** Այո՛, շատ մօտիկից եմ հետեւում: Երբ Ապրիլի 23ին ստորագրուեց այդ ճանապարհային քարտէզը, այդ ժամանակ ես Հայաստանում էի, երկու անգամ նիւթ տուեցի եւ կարծիքս արտայայտեցի, մէջս ցատում կար, թէ ինչպէս կարելի է մինչեւ վերջին վայրկեանը գաղտնի պահել ժողովրդից եւ մարդկանց կատարուած փաստի առջեւ կանգնեցնել, միանգամից ստորագրել մի փաստաթուղթ, որ հակասում է մեր ազգային շահերին: Մտածում էի՝ արդեօք ինչ արտաքին ճնշումներ են եղել, որ նախագահը գնացել է այդ քայլին: Որոհորային հարցադրումներին խուսափողական պատասխաններ էր տրուում. սա ինձ նեղացնում էր: Եւ տեսաք, թէ ինչպէս նախագահին ԱՄՆում 12.000 Հայ ընդունեց: Ինձ այստեղ ոգեւորեց այն հանգամանքը, որ ոչ միայն Հին սփիւռքը (արեւմտահայություն, պարսկահայություն) դուրս եկաւ, այլ Հայաստանից նոր եկածները: Աւելի ուշ նախագահը իր ելոյթում նշեց, որ 10 միլիոն Հայերի առջեւ պատասխանատու է եւ որոշակիորէն թուլացրեց այդ հարցը: Ես սպասում էի, որ նախագահը միանգամայն յետ կը կանգնի պրոտոկոլներից ժողովրդի բուն ընդդիմությունը պատճառարանելով, բայց նա չարեց այդ բանը դարձեալ դրսի ազդեցութեան տակ, որովհետեւ ինչ էլ որ լինի, մենք գիտենք, որ մի տարածքում ենք ապրում, որտեղ ոտսները, ամերիկացիները, թուրքերը մեծ ազդեցություն եւ այս ամէնում իրենց շահերն ունեն:

ՄԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Ի՞նչ էք կարծում, արդեօ՞ք ցեղասպանությունը շատ չենք չարչրկում:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Պէտք է ասեմ, որ սա, դժբախտաբար, Որոհորային Միությունից եկած մտայնություն է, որ մտքերը են մեր ժողովրդի մէջ:

Որոհորային վարչակարգի համար շահեկան չէր, որ Հայը մտածի ցեղասպանութեան, իր անցեալի մասին, Արեւմտեան Հայաստանի մասին, դրա համար պահանջատիրությունը գրօ էր:

(Շար. 20րդ էջ)



ՌԻԹԱ ՍԱՊՈՒՆՃԵԱՆ-ՏԷՄԻՐՃԵԱՆ
ԳՐԱԿԱՆ ՀԱՏԸՆՏԻՐԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԾՈՅ
Սոյն նպատակին գիրքեր նուիրելու համար դիմել
«Մարդարապատ» Գրախանութ
818-500-0790 կամ կապուիլ shoarslan@aol.com

Կարելուրը Այն է, Որ Առաջընթացը Զգալի է

(Շար. 3րդ էջէն)

60ականներին, երբ Յեղասպանութեան յուշակոթողը կառուցուեց, դա էլ նպատակ ունէր ժողովրդին լռեցնելու եւ տիրելու: Այսինքն՝ անցեալը թող, դէպի առաջ նայիր: Մենք մեր անցեալի վրայ հիմնուելով ենք մեր Դատը պաշտպանում: Մենք պահանջատէր ենք, սա պատմական իրողութիւն է, որ պէտք է ճանաչուի:

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ. - Երբ Օրաման նախագահ պէտք է դառնար, Ամերիկայի հայ գաղութը ոգելորութեան մէջ էր, յոյս ունէր՝ Օրաման վերջապէս կ'ասի երկար սպասուած բառը, այնինչ երկու տարի է «Մեծ եղեռնից» այն կողմ չենք անցնում: Սա արդեօք չուսահատեցրեց ձեզ: Նուաճեց հայերի սիրտն ու յետոյ թողե՞ց:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ. - Մենք ամէն անգամ մեծ յոյսեր ենք կապում, երբ ընտրութիւններ են գալիս, որովհետեւ նախքան ընտրութիւնները շատ մեծ խոստումներ են տալիս, որ եթէ իրենց ձայն տանք, ընտրուեն, Ամերիկան կ'ընդունի Հայոց Յեղասպանութիւնը: Օրաման էլ մէկն էր հերթական խոստումներ տուողներից՝ մի տարբերութեամբ, որ շատ ժողովրդավարական արտայայտութիւններ էր անում, ասում, որ փոփոխութիւններ է անելու ամէն ինչում: Բացի այդ, նրա խորհրդականներից Սամանտա Փաուերը Հայ-Դատի Զատագով էր, դրա համար մենք աւելի մեծ յոյսեր էինք կապում: Բայց այն օրուանից, երբ ԱՄՆ պետքարտուղար դարձաւ Հիլարի Բլինթոնը, բոլորիս համար պարզ էր, որ այս հարցը տարբեր ուղղութիւններով է զարգանալու, ինչը մենք տեսնում ենք, որ իրականանում է: Մենք պէտք է նկատի ունենանք, որ Ամերիկան այնքան, որքանով ցոյց է տալիս, թէ ժողովրդավար է, այդպէս չէ: Այնտեղ էլ բացարձակ ժողովրդավարութիւն չկայ: Վերջապէս նրանք վերելում էլ կան անհատներ, կազմակերպու-

կարգի վրայ: Այս բոլորով հանդերձ չպէտք է յուսահատուել, այլ պէտք է շարունակել պայքարը:

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ. - Վերջին ժամանակաշրջանում արդեօք չէք նկատել Ռուսաստանի ազդեցութեան մեծացումը մեզանում: Ըստ ձեզ, դա որքանով է վնասում մեզ:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ. - Դժբախտաբար, դա կայ: Ես տեսնում եմ, որ այստեղ կապը, գազը, ամէն ինչ վաճառուել է ռուսներին: Ռուսաստանը Ոորհրդային Միութեան փլուզումից յետոյ վերակազմակերպուել է, հիմա փորձում է ցարական Ռուսաստանի քաղաքականութիւնն իրականացնել եւ իր նախկին սահմանների վրայ առնուազն ազդեցութիւն տարածել: Սա շատ բնական է, եւ դժբախտաբար, Հայաստանում դեռեւս շատ մեծ է ռուսասիրութիւնը:

Այնուամենայնիւ, կարծում եմ՝ մենք քաղաքակրթութեան գործընթացի մէջ ենք, պարզապէս երբ քայլում եմ Երեւանի փողոցներում, յաճախ յուսահատութիւնն ու զայրոյթը խառնում են իրար:

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ. - Ի՞նչն է ձեզ ամէնից շատ Երեւանի փողոցներում զայրացնում:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ. - Նախ անմաքրութիւնը, բայց ամէնից շատ փողոցային ժարգոնը՝ ֆաշնում ես ջոզոզ ես, ապէ... սա ի՞նչ հայերէն է, չգիտեմ ինչի խառնուրդ է: Պետութիւնը պէտք է մտածի ժողովրդի, միջին խաւի մասին: Մենք այստեղ ունենք ծայրաստիճան հարուստներ եւ աղքատներ, միջինը չկայ, իսկ մենք գիտենք, որ միջին խաւն է որից բարձրանում են դեկավարները, որոնք կրթութեան մակարդակն են բարձրացնում, որոնք զանազան բնագաւառների վրայ իրենց ազդեցութիւնն են թողնում: Ո՞ւր է միջին խաւը. տնտեսական ճնշումների տակ կամ սմբել, կ'ամ գլուխն առել ու հեռացել է: Մեր նորաստեղծ պետութիւնը ճանապարհ